

Լիլիթ ՍԱՐՈՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ԼՈՒՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

Կյանքում ամենակարևոր բաների
վերաբերյալ լուռ ենք արտահայտվում:
Պատյո Կոելյո

Մույն հողվածում ուսումնասիրության է ենթարկվում լռության դերը՝ հաղորդակցական գործընթացում՝ գործաբանական մոտեցմամբ: Լռությունը՝ որպես հաղորդակցական գործընթացի հիմնարար միավոր, անփոխարինելի դեր է կատարում գործաբանության տեսակետից այս կամ այն իմաստն արտահայտելու խնդրում, ընդ որում, խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման մեջ դրսևորվում է լռության սահմանազատող բնույթը: Լռությունն իր մեջ ներառում է շատ իմաստներ ու իմաստային նրբերանգներ, որոնք կախված են իրավիճակից և որոշակիանում են կոնկրետ պահի: Հարկ է նշել, որ լռության դիտարկումը գործաբանական հայեցակետից հնարավոր է իրականացնել միայն համատեքստի միջոցով, ընդ որում կարևորվում են ինչպես նախորդող, այնպես էլ հաջորդող համատեքստերը, որոնք հնարավորություն են ընձեռում լիարժեք բացահայտել լռությամբ քողարկված տեղեկույթը և ընկալված իմաստի հավաստիությունը:

Քանալի բառեր. լռություն, հաղորդակցական գործընթաց, տեղեկատվական բաց, խոսքային/ոչ խոսքային հաղորդակցում, համատեքստ, խոսքային ակտ, ժեստեր, բառիմաստ, առարկայական նշանակության բացակայություն

Ինչպես հայտնի է, լեզուն որպես հաղորդակցման միջոց, ծառայում է օբյեկտիվ իրականության տարբեր առարկաների, երևույթների ու գործողությունների նկարագրմանը, այդպիսով ապահովելով մարդկային հաղորդակցման բարդ գործընթացը: Իրականության ցանկացած երևույթ նկարագրվում է հենց բառերի, խոսքի միջոցով, որն ի գործու է արտահայտելու մարդկային տարաբնույթ փոխհարաբերությունները, հույզերն ու ապրումները: Մարդկային հաղորդակցման գործընթացում, սակայն, խիստ կարևորվում է լռությունը, որը որպես նշված գործընթացի հիմնարար միավոր, անփոխարինելի դեր է կատարում, հատկապես գործաբանության տեսակետից այս կամ այն իմաստն արտահայտելու հարցում: Խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման մեջ դրսևորվում է լռության սահմանազատող բնույթը, որն իրենից ներկայացնում է բավականին բարդ համակարգ:

Հաղորդակցման գործընթացում լռության տեղը սահմանվում է հաշվի առնելով խոսքի հետ դրա ի սկզբանե հակադիր լինելու բնույթը, բայց և միևնույն ժամանակ այդ երկու հակադիր բևեռների սերտ փոխկապվածությունը: Վերոհիշյալը յուրահատուկ քննության առարկա է հաղորդակցական գործընթացի

ուսումնասիրման տեսանկյունից, որտեղ բառն ու լռությունն ընկալվում են ոչ թե հակադիր, այլ փոխադարձաբար անհրաժեշտ հասկացություններ:

Օբյեկտիվ իրականության մեջ գրեթե բոլորը հանդիպում են լռության, որի իմաստային նշանակություններն իրարից խիստ տարբեր են, քանի որ կարող են արտահայտել զարմանք, սեր, գայրույթ, ատելություն, ոչ ջերմ վերաբերմունք, անհամաձայնություն, կասկած, համաձայնություն և այլն: Վերոհիշյալ բոլոր տեսակները կազմում են մեկ ընդհանուր հասկացություն, որը բնորոշվում է **լռություն** եզրով: Հարկ է նշել, որ լռությունը որպես լեզվական հաղորդակցման կարևորագույն տարր շատ հաճախ արտահայտում է ավելին, քան բառերը:

Մինչև անցյալ դարի 80-ական թվականները լեզվաբանության մեջ գերիշխում էր այն բացասական տեսակետը, որ լռությունը խոսքի և հաղորդակցման բացակայությունն է: Սակայն, խոսքային ակտերի հետագա ուսումնասիրությունները ապացուցեցին լռության իմաստային անփոխարինելի նշանակությունը: Խոսքային ակտերի առաջին իսկ ուսումնասիրությունների ընթացքում առաջարկվեցին լռության բազմաթիվ դասակարգումներ, որոնք կենտրոնացան դրա տարբեր ոլորտների վրա: Դրանցից մի քանիսը հիմնվեցին լռության ակտերի դասակարգման վրա՝ ըստ տևականության կամ խոսքի մեջ ըստ դրա տեղի կամ գործառույթի: Որոշ լեզվաբաններ կենտրոնացան հաղորդակցման ծագումնաբանությանն առավել մոտ ոլորտների, ինչպես նաև հանրալեզվաբանության վրա, քանի որ սկսեցին որոշակի կապ տեսնել մարդկային վարքագծի և լռության ակտերի միջև, որտեղ հատկապես կարևորվեց խոսողի սեռը՝ որպես լռության արտահայտման հնարավոր նախապայման /Saville-Troike, 1985; García, 2006 և այլոք/: Լեզվաբանության մեջ հատկապես գերակշռում են գործաբանական մոտեցումները, որոնք հանրագործաբանական հայեցակերպից որոշակի արժեք են վերագրում լռությանը, ինչպես օրինակ քաղաքավարություն /Poyatos, 2002; Kurzon, 1998 և այլոք/: Գործաբանական լեզվաբանության տեսանկյունից լռությանը վերագրվում են տարբեր հաղորդակցական գործառույթներ, ինչպես օրինակ որոշակի տեղեկատվության հաղորդում կամ ընդգծում /Guerrero, 1999; Ephratt, 2008 և այլոք/:

Ինչպես նշում է Սևիլ Տրոյքը, լռությունը պետք է դիտարկել ոչ թե որպես խոսքային, այլ ոչ խոսքային գործառույթ: Նման մոտեցման դեպքում լռությունը կընկալվի ոչ միայն զուտ դադար, այլ որպես հաղորդակցական կարևոր միավոր, քանի որ այն ունի բարդ կառուցվածք: Ըստ Սևիլ Տրոյքի լռությունը հաղորդակցման կայացման և զարգացման անքակտելի տարր է և հասարակության մեջ սոցիալական հարաբերությունների կարգավորման կարևորագույն նախապայման, քանի որ լեզվական խոսքը ոչ միայն զուտ արտաբերված բառերն են, այլ բառերն ու լռությունը միասին վերցված /Saville-Troike, 1985: 8/: Այսպիսով, կարելի է ասել, որ գոյություն չունի բառ առանց լռության, քանի որ այն առկա է դրանցում՝ յուրաքանչյուր բառի մեջ կա հնչյունախումբ և լռություն, վերջինս առկա է նաև ձայնավորների և

բաղաձայնների միջև: Հարկ է նշել, որ դիսկուրսները լի են լռություններով և առանց դադարների դրանք միանգամայն անհասկանալի կլինեին: Այստեղ, կարևորելով լռության դերը խոսքային ակտի ժամանակ, հարկ է նշել նաև, որ շատ հաճախ մարդիկ հետևություն են անում խոսակցի ասածի վերաբերյալ, կենտրոնանալով ոչ այն հանգամանքի վրա թե ինչ ասաց, այլ հենվելով այն փաստի վրա, թե ինչ չասաց, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ լեզվի մեջ առավել կարևորվում է ներակա տեղեկատվությունը: Մարդիկ գրուցելիս, իրավիճակից ելնելով, խոսում են որոշակի թեմաների շուրջ՝ նախ ողջունում են միմյանց, այնուհետև մտերմիկ խոսակցության պարագայում խոսում են աշխատանքից, ընտանիքից, դասերից, ընկերներից և այլն: Եթե անդրադարձ չի կատարվում վերոհիշյալ թեմաներից որևէ մեկին, ապա՝ խոսակիցն անմիջապես հանգում է հետևյալ ենթադրությանը՝ թե արդյոք մնացել է առանց աշխատանքի կամ խնդիրներ ունի ամուսնու/կնոջ հետ, քանի որ տեղեկատվական բացը և բառերի բացակայությունն ինքնին մեծ տեղեկություն են հաղորդում: Ինչպես օրինակ, առօրյա խոսակցությունից վերցված հետևյալ հատվածը՝

- ¡Hola Eva! ¡Dichosos los ojos! ¿Cómo estás?
- ¡Hola Anita! Tirando. Ya lo ves, paso todo el día trabajando, ya me salen las piernas pero nada. Y tú, ¿Cómo estás? ¿Cómo están Pedro y el hijo? ¿Estás trabajando en la misma empresa?
- Te comprendo, y yo, por ahora no tengo trabajo, además muchos problemas con el hijo en el cole y por encima la tía está enferma.
- Ay amiga, ya veo, es horrible con tantos problemas. /կենդանի խոսք/

Ինչպես կարելի է նկատել չասված բառերի տեղեկատվական բացը հանգեցնում է այն ենթադրության, որ գրուցակիցը խոսեց աշխատանքի, երեխայի, մորաքրոջ մասին, սակայն, որևէ խոսք չասաց ամուսնու մասին, որը վերջինիս հետ կապված մի շարք կասկածների տեղիք է տալիս՝ գուցե ամուսինը հեռացել է, գուցե բաժանվել են և այլն: Ընկերուհին քաղաքավարությունից դրդված չկրկնեց ամուսնու վերաբերյալ հարցը, սակայն չասված բառերն առիթ են տալիս հետագա մտորումների համար: Մինչդեռ կարելի էր ասել մի նախադասություն՝ *Con el marido como siempre, որտեղ como siempre արտահայտությունը տեղեկատվական պատրանք կհաղորդեր խոսքին՝ ցրելով բոլոր կասկածները, սակայն, իրականում որևէ կոնկրետ տեղեկություն չէր հաղորդի ամուսնու վերաբերյալ:*

- Դիտարկենք առօրյա խոսքի մեկ այլ օրինակ՝
- Chao Rosa, ¡no te olvides de venir a la fiesta mañana! Van a estar también María, Carmen, Jaime, Chavi. Vamos a tener un día estupendo. ¡Besitos!
- /կենդանի խոսք/

Նշված օրինակում ընկերուհին հիշեցնում է Ռոսային հաջորդ օրվա խնջույքի մասին՝ թվելով իրենց մշտական ընկերախմբի այն մարդկանց անունները, որ ներկա են լինելու, սակայն, նա չի նշում Դիեգոյի անունը, որին

ամենաշատն է սպասում Ռ-ոսան: Վերջինը, չսաված մի բառից հետևություն է անում, որ Դիեգոն չի գալու և փորձում է գտնել պատճառները՝ գուցե հիվանդ է, գուցե քաղաքում չէ, կամ էլ հրատապ գործեր ունի: Վերոհիշյալը թույլ է տալիս ենթադրել, որ մարդկային հաղորդակցման մեջ չկա լռություն, որ չունենա իմաստ և մի խոսքի բացակայությունը կարող է ասել ավելին, քան ամբողջական խոսքը:

Այսպիսով, լռությունն իր մեջ ներառում է շատ իմաստներ ու իմաստային նրբերանգներ, որոնք կախված են իրավիճակից և որոշակիանում են կոնկրետ պահի: Լռության միջոցով որոշակի իմաստների արտահայտումն առկա է բոլոր մշակույթներում, թեև դրանց նշանակությունները կարող են իրարից տարբերվել ազգերի մշակույթներում: Լռությունը հաճախ կարող է ուղեկցվել ծիծաղով, ժպիտով, ջղաձիգ շարժումով, ժեստերով, նշաններով, որոնք թույլ են տալիս առավել ճիշտ ընկալել լռությամբ քողարկված հաղորդագրությունը: Լեզվաբանության մեջ, ինչպես գիտենք, լեզուն դիտարկվում է, որպես նշանային համակարգ, որը բաղկացած է լեզվական նշաններից, որոնք ունեն ձև և բովանդակություն, որի մասին խոսել է դեռևս Ֆ. Սոսյուրը: Ինչպես նշում է իսպանացի լեզվաբան Ա. Կիլիսը.

“Como ya se sabe el signo lingüístico tiene estructura bifacial. Las dos caras del signo son el significante o expresión y el significado o contenido, que son estudiadas por distintas ciencias lingüísticas. Al respecto, fue Ferdinand de Saussure, quien propuso conceptos novedosos para la disciplina lingüística. Uno de ellos, de crucial importancia es que el **signo lingüístico**, está compuesto a su vez, por un **significado** y un **significante**. En efecto, Saussure postuló que la relación entre el **significado** (concepto) y el **significante** (imagen acústica) era una relación convencional. Veamos un ejemplo: El **concepto** “frutilla” se expresa mediante el **significante** /fru'tiza/, mientras que en español **fresa** y en inglés, **strawberry**. En otras palabras, los **significantes** son de hecho diferentes en cada lengua. Por ello, “debe existir un acuerdo entre los usuarios del signo lingüístico, que reconocen la relación entre el significante y el significado” /Quilis, 1993: 21/:

Հարկ է նշել, որ լեզվական նշանի մասին խոսելիս Սոսյուրն ընդգծում է, որ որևէ միտք արտահայտելու համար ամենևին էլ անհրաժեշտ նախապայման չէ, որ նշանը լինի առարկայական, քանի որ լեզուն կարող է բավարարվել որոշակի առարկայի հակադիր կողմով, ինչը ոչինչն է: Հետևելով Սոսյուրի սահմանմանը, կարելի է ընկալել լռությունը որպես առարկայական նշանակության բացակայություն, որը ցանկացած պահի կարելի է լրացնել բառով կամ աղմուկով:

Ժամանակակից լեզվաբանական ուսումնասիրությունները փաստում են, որ լռությունը նույնպես դիտարկվում է որպես լեզվական նշան /Saville-Troike, 1985; Tannen, 1993; Bilmes, 1994; Poyatos, 1994; Kurzon, 1997; Escandell, 2006/, քանի որ իր մեջ ներառում է այն բոլոր տարրերը, որոնցով օժտված են

լեզվական նշանները: Լռությունն ունի որոշակի պայմանական կապ այն առարկայի կամ երևույթի հետ, որի փոխարեն կիրառվում է, ինչը հենց դրա արտահայտած իմաստի յուրահատկությունն է: Դիտարկենք հետևյալ խոսքային հատվածը՝

- ¡Qué hace aquí, hija! – rugió.
- Nada... vengo a verlos... - murmuró Blanca aterrada.
- ¡ Está loca! ¿No se da cuenta que si alguien la ve, van a decir que su marido la devolvió en plena luna de miel? ¡Van a decir que no era virgen!
- Es que no lo era, papá.
Esteban estuvo a punto de cruzarle la cara de un bofetón, pero Jaime se puso por delante con tanta determinación, que se limitó a insultarla por su estupidez /La casa de los espíritus, p. 263/.

Նշված հատվածում լռությունն արտահայտում է խոսելու անկարողություն և միևնույն ժամանակ ունի խուսափելու իմաստային նշանակություն, քանի որ լռությունը գերադասելի է, քան տհաճ տեղեկության փոխանցումը: Դա պարզորոշ նկատվում է նախորդող nada բառի միջոցով, որը նշանակում է **ոչինչ**, որը ուժգնացնում է լռության գործաբանական նշանակությունը, քանի որ ոչինչը նշված համատեքստում արտահայտում է **ամեն ինչ** իմաստը՝ իրադարձությունների մի ամբողջական շղթա, որի արդյունքում նորապսակ աղջիկը վերադարձել է հայրական տուն: Լռությունից հետո ասված երկու անհեթեթ խոսքերը vengo a verlos և կրկին լռությունը հաստատում են, որ աղջիկը խուսափում է խոսել՝ նախընտրելով չասել տհաճ ճշմարտությունը, որն արդեն բացահայտվում է հաջորդող նախադասությունների միջոցով:

Քննության առնենք մեկ այլ օրինակ՝

- Ave María Purísima.
- Sin pecado concebida.
- Te escucho, hija.
- Padre, no sé cómo comenzar. Creo que lo que hice es pecado...
- ¿De la carne, hija?
- ¡Ay! La carne está seca, padre, pero el espíritu no. Me atormenta el demonio.
- La misericordia de Dios es infinita.
- Usted no conoce los pensamientos que pueden haber en la mente de una mujer sola, padre, una virgen que no ha conocido varón, y no por falta de oportunidades, sino porque Dios le mandó a mi madre una enfermedad y tuve que cuidarla.
- Ese sacrificio está registrado en el Cielo, hija mía.
- ¿Aunque haya pecado de pensamiento, padre?
- Bueno, depende del pensamiento.../La casa de los espíritus, p. 111/.

Վերոհիշյալ խոսքային հատվածում առկա է լռության երկու դեպք, ընդ որում, երկու դեպքում էլ լռությունը ընտրվում է միտումնավոր, սակայն տարբեր են դրանց արտահայտած իմաստային առանձնահատկությունները: Առաջին դեպքում աղջիկը միտումնավոր լռում է, որպեսզի ժամանակ տա խոսակցին ընդունելու իր ասածը և շարժելու հետաքրքրասիրությունը, բացի այդ այն նաև ակնկալում է մեղքի թողություն՝ Padre, no sé cómo comenzar. Creo que lo que hice es pecado... , որպեսզի խոսակիցը սփոփի իրեն: Այդ հնարը տալիս է իր արդյունքը և հարցը չի ուշանում՝ ¿De la carne, hija?: Օրինակում ներկայացված լռության երկրորդ դեպքը, որ կրկին ընտրված է միտումնավոր, գիտակցաբար ընդգծում և ուժգնացնում է ասված նախորդող խոսքի ենթատեքստը՝ Bueno, depende del pensamiento... մի շարք հետևությունների տեղիք տալով և ավելացնելով դրա հենց գործաբանական նշանակությունը:

Ինչպես կարելի է նկատել, լռությունն իր մեջ կարող է ներառել դրական կամ բացասական հարանշանակություն, որը կախված է խոսքային ակտում դրա արտահայտման ձևից, պահից, ինչպես նաև խոսակցի ընկալումից: Գիտարկենք հետևյալ օրինակը՝

- Desearía saber- comenzó Boox con la voz del mono aún en los oídos - si se venden los animales del zoo.
 - Algunos, sí, los ejemplares repetidos.
 - Me refiero a un mono ceniciento, el gibón de la jaula circular.
 - Ése no es gibón.
 - No importa. ¿Hay otro ejemplar?
 - No, señor, es único.
 - ¿Entonces no ...?
- Es de suponer que el director no tenía esa mañana grandes deseos de hablar. Miró a Boox de soslayo, y para cortar la conversación y proseguir con sus jirafas:
- No se vende /El Mono que asesinó, p. 14/.

Վերոհիշյալ խոսքային հատվածի դիտարկումն ակնհայտորեն բացահայտում է լռության գործաբանական անփոխարինելի նշանակությունը: Երկխոսության մեջ Բուքսը, որ խոսում է ղեկավարի հետ անուղղակիորեն համոզում է իրեն վաճառել կապիկին: Տնօրենի դիրքորոշումը, որ բացասական է երկխոսության սկզբում, ընդգծվում է հակիրճ պատասխանների միջոցով, իսկ վերջում՝ լռությամբ, ինչն առավել խոսում է, քան խոսքերը և որի իմաստն ամբողջանում է նախորդող կարճ պատասխանների միջոցով: Այսինքն լռությունը նշված օրինակում դրսևորվում է որպես հոգեբանական պայքար ասելու կամ լռելու տեսանկյունից, ինչը շատ բնորոշ է ներկայացրել Մ. Կոլոդրոն. «El silencio se transforma en ese caso en resistencia a un principio de dominación verbalizado. El silencio parece relacionarse entonces con esta doble condición fundadora: la imposibilidad de hablar y la imposibilidad de callar» /Colodro, 2004: 47/:

Քննության ենթարկենք մեկ այլ խոսքային իրավիճակ՝

Los tres hombres, con la respiración suspendida, estaban doblados sobre el animal tendido en la mesa.

- ¿Y...? – exclamó Ortiz, ansioso.
Donissoff tardó un rato en contestar. La belleza angelical de su rostro había adquirido un tono duro, implacable, como si la terrible voluntad que se albergaba dentro de aquella cabeza gentil hubiera traspasado el semblante.
- Nada, todavía – respondió al fin; no es tiempo aún /Un hombre artificial, p. 49/.

Վերոհիշյալ փոքրիկ հատվածում կարելի է նկատել լռության կիրառման երկու դեպք: Առաջին դեպքում լռությունը արտահայտում է պատասխանի սպասման իմաստ, ընդ որում, խոսքային ակտի մասնակիցներից մեկը, Օրտիսը, խոսքը թողնում է կիսատ և լռում՝ ¿Y...?: Նշված դեպքում բացահայտվում է լռության գործաբանական նշանակությունը, որն ավելի է ընդգծում սպասման պահը և ակնկալվող պատասխանի անհրաժեշտությունը: Դրան հաջորդում է մյուս խոսակցի պատասխան լռությունը, որը ներկայացվում է հեղինակի նկարագրական խոսքում: Հեղինակը նշում է, որ Դոնիսոֆը մի պահ ուշացրեց պատասխանը՝ Donissoff tardó un rato en contestar: Այնուհետև Դոնիսոֆը տալիս է բացասական պատասխան: Այստեղ ուշագրավն այն է, որ հաղորդակցման երկու մասնակիցներն էլ բառային միջոցների առատության պայմաններում նախապատվություն են տալիս լռությանը՝ որպես արտահայտման արդյունավետ և առավել արտահայտիչ միջոցի: Լռությունը, որ մի դեպքում ունի պատասխանի սպասման և ակնկալիքի իմաստ, իսկ մյուս դեպքում՝ ժխտման և բացասական պատասխանի իմաստ, կարևորվում է հատկապես գործաբանական տեսանկյունից, քանի որ այն ներակա ձևով արտացոլում է այն իմաստները, որոնք արդեն արտակա դրսևորում են ստանում և բացահայտվում են հաջորդող և նախորդող խոսքային հատվածների միջոցով: Վերոհիշյալը փաստում է այն, որ լռության դիտարկումը գործաբանական հայեցակետից հնարավոր է իրականացնել միայն համատեքստի միջոցով, ընդ որում կարևորվում են ինչպես նախորդող, այնպես էլ հաջորդող համատեքստերը, որոնք հնարավորություն են ընձեռում լիարժեք բացահայտել լռությամբ քողարկված հաղորդագրությունը և հաստատելու ընկալված իմաստի հավաստիությունը:

Այսպիսով, կարելի է ասել, որ տարբեր խոսքային ակտերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ լռությունը ունի տարբեր գործաբանական իմաստներ և դրա հանրագործաբանական արժեքը շատ հաճախ կախված է խոսակիցների միջև եղած հարաբերություններից և հաղորդակցական գործառնությունից, որ իրականանում է այն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Bilmes J. Constituting silence: Life in the world of total meaning // *Semiotica*, vol. 98, 1994.
2. Guerrero B. M. Los actos silenciosos en la conversación en español. Estudio pragmático y sociolingüístico. Madrid, 1999.
3. Cabrera A., Neneka P. Lenguaje y comunicación. Caracas, 2001.
4. Colodro M. El silencio en la palabra: Aproximación a lo innombrable. Buenos Aires, 2004.
5. Ephratt M. Someone to be silent with, someone to be silent to the means and functions of eloquent silence in the novel “Someone to Run with” by David Grossman. DAPIM - Research in Literature 16 (in Hebrew), Tel Aviv, 2008.
6. Escandell V.M.V. La comunicación // *Boletín de Lingüística*, v.18, n 25. Caracas, 2006.
7. Escandell V.M.V. Introducción a la pragmática. Barcelona, 1993.
8. García O., Schiffman H., Zachariah Z. Fishmanian Sociolinguistics: 1949 to the present // *Language Loyalty, Continuity and Change: Joshua A. Fishman's Contributions to International Sociolinguistics*. New York, 2006.
9. Quilis A. Tratado de Fonología y Fonética Españolas. Madrid, 1993.
10. Kurzon D. Discourse of Silence. Amsterdam, 1998.
11. Poyatos F. Non-verbal Communication across Disciplines. Amsterdam, 2002.
12. Saviile-Troike M. The place of silence in an integrated theory of communication // *Perspectives on Silence*. New Jersey, 1985.
13. Tannen D. Framing in Discourse. Oxford, 1993.
14. Богданов В. Речевое общение: Прагматические и семантические аспекты. Ленинград, 1990.
15. Богданов В. Молчание как нулевой речевой акт и его роль в вербальной коммуникации // *Языковое общение и его единицы*. Калинин, 1986.
16. Горелов И.Н. Невербальные компоненты коммуникации. Москва, 1980.
17. Леонтьев А.А. Основы психолингвистики. Москва, 1997.
18. Николаева Т. М. Интерференция языковых и неязыковых коммуникативных средств в человеческом общении. Москва, 1973.

19. Шапошников В. Н. Прагматика и синтаксис дискурса: обозначение принадлежности речи и манеры выражения в современной коммуникации // *Современная коммуникативистика, портал Nauka.ru*, 2015.
20. Allende I. La casa de los espíritus. Barcelona, 1994.
21. Quiroga H. El Mono que asesinó. Editor: Germán Sánchez Ruipérez. Madrid, Valdemar Ediciones, 1989.

Լ. ՏԱՐՕՅԱՆ – *Прагматическое значение молчания в процессе коммуникации.* – Данная статья посвящена прагматическому аспекту изучения молчания. Молчание как коммуникативное явление включает такие средства невербальной коммуникации как жесты и мимика, которые выявляют особенности смысла молчания. Прагматический подход к данной проблеме позволяет выявить такие значения, как радость, грусть, несогласие и т.д. Многозначность молчания создает почву для определения его основных функций. Основные функции молчания выявляются в контексте и позволяют раскрыть разные значения, которые не могут быть выражены на уровне вербальной коммуникации.

Ключевые слова: молчание, коммуникативный акт, вербальная/ невербальная коммуникация, контекст, прагматический подход, жесты, мимика, значение слова

L. SAROYAN – *The Pragmatic Function of Silence in the Process of Communication.* – The present paper studies the role of silence in communication. Its specific features are revealed in communication, both verbally and non-verbally. People use various non-verbal means as symbolic elements. These non-verbal means have different significations: they can be expressed in mimic behaviour and gestures. The role of silence as a non-verbal means of communication is of great importance, as it conveys information that is not expressed verbally and varies according to the context: it may express different emotions like happiness, anger, expectation, astonishment, agreement, etc. The study comes to prove that in some cases silence may be used intentionally for emphasizing the implicit meaning of the message, which is revealed in macro-context.

Key words: silence, communicative act, verbal/non-verbal communication, pragmatic approach, context, mimics and gestures, facial expressions, word meaning